

## ԵՀՀ կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոց

Հոկտեմբերի 29- Նոյեմբերի 1, 2015 թ.

### Ցանցապետություն. Դավիթ Հովհաննիսյան

00:24 - Սկզբում հետևյալն է. մրցակցությունը, գլոբալ պրոյեկտների մրցակցությունը: Եվ այս գլոբալ պրոյեկտներն ով որ սկսում է տանուլ տալ՝ նա փորձում է խանգարել մյուսներին: Կոնֆլիկտը մեծանում է, խցանում է, փակում է, կամ էլ ասենք սկսում է դեպի իրեն ձգել ինչպես Չինաստանն ասենք՝ Թուրքմենստանի գազը դեպի իրեն է տանում, հա՞: Արդեն երկու գազամուղ կառուցել է, երրորդն էլ, հա՞: Սկզբունքը սա է:

00:57 – Պարոն Հովհաննիսյան...

00:58 - Այսպես կարող եք հաշվարկել, ի՞նչ կարող է լինել:

01:01 - Պարոն Հովհաննիսյան, լինելով հայ-թուրքական հարաբերությունների այս աժիոտաժի մեջ, երևի անընդհատ շփվելով տարբեր տեսակի մարդկանց հետ՝ ն՝ թուրքական կողմից, ն՝ հայկական կողմից, իմ մոտ այսպիսի հարց է առաջանում. հենց այս սահմանը՝ հայ-թուրքական սահմանը, այ սենց, որ անցնում է, մի կողմը ռուսական զորքեր են կանգնած ըստ էության, մյուս կողմում՝ ՆԱՏՕ-ի զորքերը: Հիմա իմ մոտ միշտ հարց է առաջանում. արդյո՞ք այս հայ-թուրքական հարաբերությունների մեջ խնդիրը մենակ հայ և թուրք ժողովուրդների մեջ է, անցիալի մեջ է: Այստեղ մեծ, շատ ավելի մեծ շահեր կան բախվող:

01:32 – Բնականաբար, դուք շատ ճիշտ եք: Սովետական Միության քայքայումը սկսեց ինչի՞ց: Արդեն շոշափելի, հա՞... Նենց, ոնց կա՝ էշի ականջում քնած էր: Նրանք միտինգ չէին կարողանում հավաքել՝ իմ ուսանողներն են գնացել, կազմակերպել: Հենց որ խցանվեց՝ երկաթգիծը դադարեց չէ՞ աշխատելը: Այդ երկաթգիծը օրեկան առնվազն, մինիմումն են ասում, յոթ հազար տոննա բեռ էր տեղափոխում: Այսինքն՝ կապում էր Սովետական Միությունը ամբողջ Պարսից ծոցի երկրների հետ, հա՞, այդ այսպես ասենք: Նավթամուղ, գազամուղ էլ չեմ ասում: Էներգատար այս բոլոր գծերը դադարեցին աշխատել, հա՞: Ասենք, ընդհանուր համակարգը միասնական էլեկտրացանցերի դադարեց գոյություն ունենալուց, և այլն, և այլն, և այլն: Ասենք՝ խցանում, հստակ՝ պոկեց, հա՞: Այնպես որ հայ-թուրքական հարաբերությունները իհարկե «բանալի» հարաբերություններ են մեզատարածաշրջանի առումով: Ոչ թե միայն Закавказье: Նախկինում դա մի տեղ մենք գերմանական դասական փիլիսոփայությունից եկող «Lebensraum» (բառով ենք ասել), հա՞: Այսինքն՝ հա՞, կենսատարածք, կենսատարածություն, կենսական տարածություն: Հիմա. ասենք Միացյալ Նահանգների կենսական տարածության մեջ Ղրիմը մտնո՞ւմ է, թե՞ չէ: Մտնում է, չէ՞: Իսկ ասենք՝ Տոնգո կղզիներ կան, պետություն, անկախ պետություն է օվկիանոսի համակարգում գտնվող, իր կենսական տարածության մեջ ասենք, չգիտեմ, ի՞նչ

ասեմ, Մալազիան մտնում է, թե չէ: Հա՛, դե ոնց որ մի քիչ մտնում է, բայց առանձնապես չէ, չէ՞: Լա՛վ: Այսինքն՝ յուրաքանչյուրը իմպուլսներ են: Իմպուլսները կարող ես չափել. քո քաղաքակրթական արդյունքը ուր որ հասնում է, այնտեղ էլ քո կենսական տարածությունը կա, գոյություն ունի, հա՞: Օրինակ՝ Մոցարտ որտեղ ես լսում, այ այդտեղ եվրոպական տարածությունն է, հա՞: Եվ այլն, մի խոսքով:

04:08 Մյուս թեմային ենք անցնում: Թեման այսպես՝ երկու անվանում ունի: Առաջին անվանումը՝ «Էլեկտրոնային, թվային հասարակություն»: Դա ի՞նչ բան է: Հա՛, այսօր հաստ այսպես մենագրություններ կան, այդպես էլ կոչվում են՝ Electronic digital society:

04:42 - Չարգացած քաղաքացիական հասարակությունը մի քայլ առաջ է գնացել:

04:48 - Իսկ ինչի՞:

04:50 - Որովհետև...

04:51 - Ինչի՞ հասարակություն: Երեք հարց ունեմ: Ինչի՞ հասարակություն, ինչի՞ քաղաքացիական և ինչի՞ զարգացած:

05:02 – Հասարակություն, որովհետև մարդկանց որոշակի համախումբը, քաղաքացիական, որովհետև...

05:09 - Բայց էլեկտրոնայինը ի՞նչ կապ ունի դրա հետ:

05:11 - Այսինքն՝ տեղեկատվական հոսքերը...

05:15 - Դա շատ հետաքրքիր հարց է: Այսինքն՝ ինֆորմացիոն համակարգերի մասին է խոսքը, ինֆորմացիոն հոսքերի և դրա այն տարբերակի, որը այսօր գերիշխող է աշխարհում, որը թույլ է տալիս, որպեսզի մենք աշխարհը պատկերացնենք այնպես, ինչպես պատկերացնում ենք, չէ՞: Շատ կարևոր է, թե քո աշխարհընկալումն ինչպիսի՞ն է: Երբ որ դարաշրջանի՛... դարաշրջանը սկսում է փշրվել, իսկ մենք դրա վկաններն ենք այսօր, հա՞, դրա համար ինֆորմացիա է, որ դարաշրջանը փշրվում է, հա՞: Եվ թերևս սա ուրիշ, մեր աշխարհընկալումը ֆրագմենտալ է դառնում, որովհետև մենք մի ոտքով այնտեղ ենք, հա՞, հաստ հատորներ ենք գրում դեռ: Ես ընկերուհի ունեմ, շատ լավ գիտնական է: Ամեն տարի այսքան (հաստ հատորներ է հրապարակում)... Ասում եմ. – Միրելիս, ո՞վ է կարդում: Ոչ ոք չի կարդում, հա՞: Այսօր ինձ քսան էջից ավել բան տաս, ես չեմ կարդա: Ես այդ ժամանակը չունեմ, հա՞, էդ քո մանրամասն, փաստաթղթերից քաղած, բան: Դու ինձ ասա՝ ի՞նչ ես ասում, ի՞նչ եզրակացության ես եկել, մնացածը, եթե պետք լինի, ես կգնամ գուզ կանեմ, կգտնեմ, հա՞: Բայց վեց հարյուր էջանոց գիրք, կներես էլի, դա միայն կռիվ անելու համար է (որ մարդու գլխին տաս):

06:47 – Ես իմ մասնագիտության բնագավառում վեց հարյուր էջից անցնող գրքեր ունեմ ու շատ լուրջ մտքեր են, ու շատ լուրջ թեմաներ են:

06:59 – Այսինքն՝ ինֆորմացիոն հոսքը շատ է, հսկայական է, հա՞: Եվ այդ հոսքը շատ բազմազան է, հա՞: Մի շարք գիտնականներ գնահատում են մեր դարաշրջանը, հիմա-ն, այս փոքրիկ ժամանակաշրջանը «ինֆորմացիոն շոկի դարաշրջան» մի շատ պարզ պատճառով. որովհետև մենք անընդհատ այդ ինֆորմացիոն հոսքերի տակ ենք գտնվում և այդ ինֆորմացիոն հոսքերից մենք վերցնում ենք միայն այն, ինչը ունակ ենք վերցնելու և հսկայական քանակությամբ ինֆորմացիա բաց ենք թողնում, հա՞, որովհետև չունենք ընդունիչը: Եվ չունենք ընդունիչը մի շարք պատճառներով: Այդ իմ ասած գիտակցության ֆրագմենտացման, աշխարհընկալման ոչ ամբողջականության հետևանքով, հա՞, մենք չունենք կարևորագույն քարտեզը՝ գիտելիք գտնելու քարտեզը: Նոր ինձ հիշեցրեց Ռոբերտը, որ ես Ումբերտո Էկո շատ եմ սիրում և իր արտահայտած մի շատ կարևոր միտք եմ ուզում ձեզ հիմա փոխանցել: Ինքն ասում էր, որ «հեռուստատեսությունը աղքատացրեց հարուստին և հարստացրեց աղքատին»: Ինչո՞ւ: Որովհետև աղքատը հնարավորություն ունեցավ ինչ-որ պիեսներ նայելու, ինչ-որ երաժշտություն լսելու, որը երբեք իրեն չէր հասնի այլ պարագայում: Իսկ հարուստը ծուլացավ: Ինքն էլ չի ուզում թատրոն գնալ, չի ուզում համերգի գնալ, հա՞: Ջեֆինգ է անում, մտնում է այն, ինչ իրեն դուր է գալիս, սկսում է նայել: Իսկ, ասում է (Էկոն), ինտերնետը՝ լրիվ հակառակը: Հարուստին ավելի է հարստացնում, աղքատին ավելի է աղքատացնում: Շա՛տ ճիշտ գաղափար է: Ինքն ասում է. «ճակատագրի բերումով ես շատ լավ ընտանիքում եմ ծնվել, շատ լավ կրթություն եմ ստացել, շատ լավ, երբեմն հանճարեղ մարդկանց հետ եմ շփվել, ուստի ես, երբ որ մտնում եմ ինտերնետ՝ կարողանում եմ տարբերակել լավը վատից»: Իսկ այն մարդը, ով որ դա չունի՝ ոչ լավ կրթություն ունի, ոչ դաստիարակության առումով բախտն այսպես ժպտացել է իրեն, ոչ շրջապատի առումով գիտելիքներ կամ ինֆորմացիա ստանալու ինչ-որ հնարավորություններ ունի, այս մարդն ավելի աղքատանում է, որովհետև, երբ որ մտնում է ինտերնետ, հա՞, ինչ որ գուզ է տալիս, էն մի միլիոն հատ հղում է բերում: Դե արի այդ մի միլիոն հատից ջոկի՝ որն է լավը, որը վատը: Դրա համար աղքատանում է ինքը: Ինքն ուտում է այն, ինչ իրեն առաջինը տալիս են: Իսկ առաջինը, որպես կանոն, ամենաախմախ բաներն են տալիս, չէ՞: Վիկիպեդիայի... Եվ երկուսով աղքատանում են:

10:27 – Մենք խոսում ենք ցանցի մասին: Մենք խոսում ենք ցանցի մասին, որովհետև մենք հիմա ցանցային ինֆորմացիոն համակարգում ենք ապրում, և այս ցանցային ինֆորմացիոն համակարգն ինքը չափազանց արագ է, ինֆորմացիոն հոսքը հսկայական է, և այդ հսկայական ինֆորմացիոն հոսքն ազդում է ամեն ինչի վրա, այդ թվում նաև ընդունվող որոշումների վրա: Դե պատկերացրեք, ես ինչ որ մի տեղ, սրանից մի քանի ամիս առաջ կարդացի, որ ազգային անվտանգության գործակալությունը Միացյալ Նահանգների, ընդունելով որպես հիմք այն հնարավորությունները, որոնք տրվել են իրեն «փեթրիոթ» օրենքների փաթեթով, օրեկան լսում է, արձանագրում է և այլն, և այլն, մի ինչ-որ կատաստրոֆիկ թիվ, տրիլիոնների հասնող, հա՞ խոսակցություններ, sms-ներ, մեսիջներ, սկայպային հաղորդագրություն, և այլն, և այլն: Դուք պատկերացնո՞ւմ եք թիվը: Դուք պատկերացնո՞ւմ եք... դրա գրանցելը հլը հասկացանք, լավ: Բայց դրանից ընտրելն այն, ինչը իրոք անհրաժեշտ է, սա արդեն մի լո՛ւրջ խնդիր է, որի վրա տասնյակ

հազարավոր մարդիկ են աշխատում, լրջագույն, բարդագույն ծրագրեր են գրվում, հզորագույն կոմպյուտերներ են, հա՞, ցանցային համակարգերով աշխատում: Լա՛վ, ասենք դա էլ մի կերպ, հա՞: Ասենք՝ այն, որ բրինձը մաքրում են, չէ՞, իստակում են՝ այն սևերը գցում են մի կողմ, սպիտակը մի կողմ, այսինքն՝ դա էլ արվեց, հա՞: Բա հիմա այս սևերը, որ արինք, մաքրեցինք, սրանց վերլուծությունը պիտի արվի: Այս վերլուծության հիման վրա հնարավոր գործողությունների մի քանի սցենարներ պիտի մշակվեն: Եվ հետո սրանք պիտի գնան որոշում ընդունողների մոտ, որ այս ամեն ինչի հիման վրա նրանք կայացնեն իրենց որոշումը: Դուք տեսեք՝ ինչպիսի հսկայական գործողությունների մի քանակ պիտի... (Մի վայրկյան վերջացնեմ, հետո կառաջարկեք, հա՞): Ուրեմն՝ սրանք պիտի վերլուծվեն, չէ՞: Եվ հիմնական պատճառը սխալ որոշումների... (Իսկ եթե մենք հիմա նայենք մեր քարտեզի վրա՝ երկրագնդի, կտեսնենք, որ կիսաքառտիկ վիճակ է, չէ՞, որ գործընթացները շատ վատ են կառավարվում...) հենց այն է, որ ինֆորմացիոն արագությունը մի քանի մակարդակով գերազանցում է որոշումների ընդունման արագությանը: Հարցդ առաջացրու.

13:27 – Մենք ասեցինք, որ սևերը... Բրինձը մաքրում ենք, սևերն առանձնացնում ենք, հետո սևերը մի հատ էլ ենք իր հերթին մաքրում: Ի՞նչ իմաստ ունի սևերը մաքրել:

13:35 – Չես մաքրում. վերլուծում ես:

13:37 – Հա՛, ինչների՞ս է պետք սևերի վերլուծությունը:

13:38 – Որ իմանաս՝ ինչի՞ համար ես...

13:40 – Դե ես Ազգային անվտանգության գործակալության մասին էի խոսում՝ դու բաց թողեցիր: Սպիտակն ինձ չի հետաքրքրում՝ էն մաքուր է, բայց սևը տարբեր տեսակ է լինում:

13:49 – Բայց ինչքան գիտեմ, իրենց մոտ օրենքով է չէ՞ կարգավորված:

13:54 – «Փեթրիոթ» փաթեթն է, էլի, որն ընդունվեց, այսինքն՝ «մենք չենք խախտում», բայց ես օրենք խախտելու մասին չեի խոսում: Ես խոսում էի հիմնական պրոբլեմների մասին, որ ինֆորմացիոն արագությունը գերազանցում է որոշումների կայացմանը: Սա մեծ խզում է, որն այսօր չափազանց բարդ և բացասական ասենք, հա՞, ազդեցություն ունի ամբողջ աշխարհի վրա: Նախ՝ ցանցն ի՞նչ է, ո՞վ կարող է ինձ ասել:

14:35 – Իրար կապված...

- Կոմունիկացիայի միջոց:

14:40 – Դե մենակ չէ, ցանցով ձուկ էլ ես բռնում:

- Թակարդ
- Ուղղակի՝ ցանցը ի՞նչ է:

14:46 – Որ ինչ որ բաներ կապես իրար

14:47 – Հա՛, ասենք թե: Այսպես, այսպես...

15:00 – Կարող ենք մի բան մտածել, պարոն Հովհաննիսյան, օրինակ՝ կետերի բազմություն վերցնել և այդ բոլոր կետերը տարբեր ձևով իրենք իրար հետ են միացված ու տարբեր հարաբերությունների մեջ են իրար հետ, և անգամ կարող ենք հաշվի մեջ ասել միլիոն կետի, միլիարդ կետի պարագայում, ութ միլիարդ կետի պարագայում ինչքան հարաբերություններ կարող են տեղի ունենալ, ու այդ թիվն աստղաբաշխական թվերի է հասնում:

15:24 - Բայց դա ցանց չի: Գիտես ինչի՞ ցանց չի: Որովհետև ցանցի համար, միասնական համակարգ, հա՞, կազմող ցանցի համար ինֆորմացիոն տիպայնությունն է կարևոր: Այսինքն՝ ես A տիպի ինֆորմացիա եմ ուղարկում, սա այստեղ՝ այս հանգույցում, կարող է ինչ-որ վերամշակվի, բայց A-ն իր որակը չի կորցնում՝ կարող է դառնալ A1, հա՞, բայց ինքը A է: Ու այստեղ էլ, միևնույնն է, ինքը շարունակում է A մնալ: Հասկանո՞ւմ եք: Ես փորձել եմ սա նկարել՝ չի ստացվել, իհարկե: Սա պատկերացրեք: Սա սարդ է, պոչից ինչ-որ բան է թողնում: Այ էսպես թողնում է, այ էսպես, և հետո գալիս է մի հատ էսպես է պտտվում, հետո էսպես է պտտվում, հետո էսպես է պտտվում: Սա էլի ցանց է, չէ՞: Բայց սրա...

- Սա սարդոստայն է, ցանց չի:

- Սարդին ջնջենք:

16:42 – Սարդին ջնջենք էլ, այդտեղով անցնող ինֆորմացիա կա՞: Բայց այդ A ինֆորմացիան անցնո՞ւմ է այդտեղով:

16:44 – Իհա՛րկե, ես հատուկ նշեցի՝ ինքը իրա պոչից է թողնում: Այսինքն՝ նույն բանն է:

- Պոչից թողնում ա...

- Տղա ջան, լսի՛...

16:51 – Չէ, ես ուզում եմ հասկանամ:

16:52 – Հա՛, բա ես, բա ինչի՞ եմ էստեղ կանգնած՝ որ փորձեմ հասկացնել: Սա նույն բանն է, չէ՞, նույն որակն է, նույն տիպն է, չէ՞:

- Տիպը նույնն է, հասկացանք:

- Այսինքն...

- Նույն տեղից է դուրս գալիս:

- Լրիվ նույն համակարգն է: Հիմա ուրիշ սարք...

17:14 – Այսինքն՝ դա մի ցանց է, որով մենակ մի տիպի ինֆորմացիա է հոսում:

17:18 – Ապրես, մի տիպի:

17:19 – Միայն մի տիպի:

17:20 – Ոչ թե միատեսակ, չէ՛, չէ: Ուրիշ տարբերակ չկա՛ մի տիպի, հա՞, բայց ոչ թե միատեսակ: Իսկ սա մի հատ ուրիշ սարդ է, հա՞, կամ սարդ չի: Մա էլ լրիվ ուրիշ տիպի է, հետո իրա վրայով էլ է անցնում, հետո լրիվ խախտվում է համակարգը, բայց կարմիր է ամբողջ ինֆորմացիան: Մա էլ ուրիշ տիպի՝ կարմիր:

- Սարդն ընդամենը սարքել է իրա համար գործիք:

- Հա՛

- Սարդը չի սարքել իրա համար կոմունիկացիայի միջոց:

-Մա մի քիչ աբստրակտ է: Սարդը կոմունիկացիայի միջոց է սարդոստայնը սարքել:

18:22 – Մի հատ սարդ ունենք՝ անունը կիսուր է: Ինքը քեզ իրա սարդոստայնի մեջ բռնել է:

18:27 – Սարդին բռնել է իրա սարդոստայնի մեջ, ուրեմն այդ սարդի գոհն եմ դարձել:

18:31 – Ինչի՞ ես գոհ: Իրա ինֆորմացիոն համակարգի մասնիկ է քեզ տալիս, որովհետև դու պատմելու ես:

18:37 – Չեմ պատմելու: Ինքը ընդամենը իրա...

18:41 – Մի հատ ջնջոց տվեք էս սարդին ջնջեմ: Ցանց է սա, ցանց:

18:50 – Հա, ես համաձայն եմ՝ ցանց է:

18:52 – Էսա սարդին ջնջեմ, կտեսնես, որ ցանց է: Շնորհակալություն:

19:02 – Էլ չկա: Սարդ չկա: Բայց կա Վատիկան: Մա (կհիշեցնեմ) ռադիանտ է: Հիմա՛ ոնց կբնորոշեք... Մի վայրկյան... Ոնց կբնորոշեք այս ցանցը:

19:34 – Այս ցանցը: Ես ասեմ:

19:35 – Ասա:

- Եթե ամեն կետում դա ունի իրա փոքր Վատիկանները ամեն կետում, որտեղ...

- Ուրեմն ես սա չէի նկարի, եթե չունի:

- Ասենք:

- Բայց ես սա նկարել եմ:

- Ասենք՝ իմ ասելիքս ի՞նչ ա: Մի բանի տակ կարելի է պատկերացնել գերցանց, և ասենք... և ուրիշ բան:

20:04 – Հա, իհարկե, ինչ ուզես, կպատկերացնես: Մա ի՞նչ է: Աբստրակտ նկար է, հա՞:

-Դա ուրիշ հարց:

- Ուրեմն՝ էստեղ ինչպես... Անունդ ի՞նչ է: Անունդ ի՞նչ է:

- Դավիթ:

- Դավիթ: Էստեղ, ինչպես Դավիթն ասեց, փոքրիկ Վատիկաններ են, հա՞: Այսինքն՝ էս իրա համակարգի կառույցներն են: Այս կառույցների միջոցով այս ինֆորմացիան փոխանցում է էստեղից, հետ է գնում: Այս ցանցը՝ էս երեք տիպի եմ բաժանում ցանցերը: Այս ցանցը ամենա... բանը՝ հեշտ աշխատող, բայց միաժամանակ ամենախոցելի ցանցն է, որովհետև ունի և՛ տեքստ, և՛ կենտրոն: Ամենահեշտ աշխատանքն է: Տեքստ ասելով՝ էս նկատի ունեմ այ էն ինֆորմացիոն, իր արժեքները ձևակերպող տեքստը, որը կազմում է իր էությունը, իր ինքնությունը, հա՞: Մի քիչ հետո ինքնության մասին կխոսենք: Ուրեմն սա առաջին տիպի ցանցն է՝ ունի կենտրոն և տեքստ: Սա՝ այն տեքստն է, այն ցանցն է, որն ունի միայն տեքստ: Սրան վերջում կանդրադառնանք: Եվ վերջապես, սա՝ այն ցանցն է, որն ունի միայն կենտրոն: Սա ունի և՛ կենտրոն... և՛ կենտրոն... և՛ կենտրոն, և՛ տեքստ: Սա ունի միայն տեքստ, հա՞: Ուրեմն ասենք՝ տրանսնացիոնալ որևէ ընկերություն վերցնենք: Օրինակ՝ չգիտեմ, Ջեներալ Մոթորս կամ Տոյոտա: Ինքն ունի կենտրոն: Ինքն ամբողջ աշխարհում կա, չէ՞: Ինքը բոլոր երկրներում գրեթե իր կամ գործակալությունն ունի, կամ գործարանն ունի, կամ ինչ-որ մասերի հավաքվելու կենտրոնն ունի, կամ վաճառքի ինչ-որ բաներն ունի և այլն: Ինքը տեքստ չունի: Ինքն ունի միայն կառավարման կենտրոն, հա՞: Այդ պատճառով իր աշխատանքը բավականին կազմակերպված է, բայց կենտրոնը քանդում էս՝ ինքը գոյություն չունի, ի տարբերություն սրանից. երբ որ կենտրոնը քանդում էս՝ տեքստը շարունակում է աշխատել, կամ տեքստը սկսում էս ջնջել՝ կենտրոնն ինքն անընդհատ փոխում է, լրացնում է ու վերականգնում է իր տեքստը:

23:07 – Հիմա սրան ենք անցնում: Տեքստ. տեքստ ասելով, դա այն է, ինչն արտահայտում է արժեքային հիմքը և ինքնությունը: Ի՞նչ բան է ինքնություն: Դա դուք պետք է ինձ ասեք:

23:23 – Պարոն Տեր-Գաբրիելյանը ձեր սահմանումը տվել է արդեն ինքնության:

23:30 – Կարելի՞ է պատասխանել: Ինչքան որ կարող էս...

23:37 – Այն հարցերի գումարը, որոնց դու պատասխանում էս, հա՞: Դե ասենք էս... Անունդ ի՞նչ է:

- Շահանե:

23:45 – Արդեն ինքնության պես մի հստակ պատասխան էս ստացա: Ազգանունդ ի՞նչ է:

- Խաչատրյան:

23:55 – Արամ Խաչատրյանին բարեկա՞մ էս:

- Չէ՛:

- Արդեն երրորդը ստացա: Աղջի՞կ էս:

- Հա՛:

- Չորրորդը ստացա, հա՞: Որտեղացի՞ ես:

- Եղեգնաձորից:

- Իսկ հա՞յ ես, թե ո՞նք ես:

- Հա՛յ եմ:

- Տեսնո՞ւմ ես՝ ինչքան է, հա՞: Իսկ, ի՞նչ ասեմ, նումիզմատներին ո՞նց ես վերաբերվում: Նումիզմատները են հին դրամներ հավաքողներն են:

- Անտարբեր եմ:

- Այդ հարցին պատասխան չունես: Իսկ բոզոնների շարժման հետ կապված ի՞նչ պատկերացում ունես: Ուրեմն այդ ոլորտը չկա, հա՞: Եվ այլն, և այլն:

-Հա, հասկացա:

24:57 – Հա, այ էդ, ինչքան ավելի շատ հարցերի ես պատասխանում, այնքան ավելի հզոր է ինքնությունդ: Ինչքան ավելի շատ լեզուներով՝ չակերտավոր լեզուներով, հարց ես հասկանում, - կտավ ես անում՝ հասկանում ես, երաժշտություն ես նայում՝ հասկանում ես, հա՞: Այսինքն՝ որքան տարբեր սեմանտիկ համակարգերի տիրապետում ես, այնքան հզոր է ինքնությունդ:

Բայց այստեղ մի հատ էլ պրոբլեմ կա: Ուրեմն՝ վերցնում ենք զարգացման... այս սիրած... այ, այս սիրած... այ էս բառի վրա կենտրոնանանք: Պատկերացնենք, որ էս էսպես պտտվում է: Ես վատ եմ նկարում: Ուրեմն՝ սա վերցնենք, սրա վրա շատ չեմ կենտրոնանա, սա մարդու կյանքն է, մարդու ինքնությունն է, կամ տեսակն է, կամ իմ որպես հայ առաքելականի տեսակն ա, կամ իմ որպես տղամարդ տեսակն է, հա՞, ինքնության որոշակի տեսակն է: Մա այն արժեքային համակարգն է, որը նպաստում է բազային արժեքի պահպանմանը և ուժեղացմանը: Մենք ուղղակիորեն չենք գործում, դրա համար մշակութային կողմ են ստեղծում, հա՞: Մշակութային կողմ մարդկային կյանքը, արժեքն է տալիս, մշակութային կողմում «Մի սպանիր» ձևակերպումն է ստանում: Մա շատ եմ պատմել, կարող է գիտեք, կներեք կրկնության համար: Մա էլ ուղղակիորեն չի բան անում, սա կառույցների և նորմերի միջոցով է ներկայացվում՝ օրենքներ, սահմանադրություն, ոստիկանություն, կամ ծեծել՝ չգրված օրենքներով և այլն, և այլն, հա՞: Մա՝ այ սա, այ սա է, ու ես էստեցից իհարկե ես իմ մշակութային, քաղաքակրթական արդյունքն եմ ուղարկում. Ջիվան Գասպարյան, շախմատի չեմպիոն, և այլն: Մա մտնում է համաշխարհային այդ բանի՝ հոսանքի մեջ, որն անընդհատ իմ վրա էլ է գալիս, ձեր վրա էլ է գալիս, բոլորի վրա էլ է գալիս: Հիմա այստեղ՝ այ էս մեջտեղը, դա իմ բազային արժեքն է: Ուղիղ չի ստացվում, բայց մի կերպ էլի, հա՞: Մա իմ մինիմալ անվտանգությունն է: Բայց այստեղ էլ մի հատ պրոբլեմ կա՝



սա էլ իմ մաքսիմում անվտանգությունն է: Այ սա, որ սկսում է քանդվել, ես կորցնում եմ իմ տեսակը: Ուրեմն՝ ինքնությունը հենց որ շատ-շատ է ուժեղանում, ես դառնում եմ կոսմոպոլիտ՝ կորցնում եմ ինձ: Կամ ես հարց եմ ստանում՝ արդյո՞ք ես տղա եմ, թե աղջիկ: Կորցնում եմ ինձ, չէ՞: Ինձ մինչև հիմա ոչ ոք այդպիսի հարց չէր տվել: Մեկ էլ սկսեցին հարց տալ, ես էլ սկսեցի մտածել, հա՞:

Մի հատ անեկդոտ պատմեմ: Կներեք ինձ: Ասում ա՛՛ երկու ընկեր հանդիպում են: Ասում ա. Լսի՛, վաղուց ուզում էի քեզ հարցնել՝ ո՞նց եղավ, որ դու դարձար գեյ: Դե ասում ա՛՛ էսենց, քո պես՝ հարց ու փորձ անելով: Հարց են տվել, մարդը մտածում է, հա՞: Մինչև դա հարց չեն տվել, չի էլ մտածել, հա՞: Շատ մեթոդաբանական անեկդոտ է, ասեմ ձեզ:

Ուրեմն՝ ես ինքնությունը հո միակը չի աշխարհում, չէ՞: Ասենք՝ նումիզմատների օրինակը բերեցի: Աշխարհով մեկ, քանի որ ցանցը, փառք աստծո, արագ է, թվային է՝ իրանք կապված են իրար հետ, և այդ ինֆորմացիան, հա՞, միայն կապույտ է, այսինքն՝ ինֆորմացիան միայն հին դրամների մասին է: Ես հավաքում եմ միայն կենդանիների դրոշմանիշներ՝ մարկեք: Այսինքն՝ այս համակարգի մեջ բրիտանական գաղութներ հավաքող մարկաներով ֆիլատելիստներ չեն մտնում: Բայց մենք ունենք հսկայական մի հատ այսպես ցանց, որտեղ այ էս կարմիր գույնի ինֆորմացիան է պտտվում: Եվ մենք ունենք մի շարք օրինակներ տարբեր տիպի ցանցերի՝ այլ կենտրոն և տեքստ. առաջին աշխարհում՝ ցանց-պետություն: ԱՄՆ:

30:04 – Ո՞րը:

30:05 – ԱՄՆ-ն: Էնպես տեղ չկա, որ ամերիկյան դրոշ չլինի: Չէ՞: Չկա: Երկրագնդի վրա, որ նայես՝ լուսնի վրա էլ կա դրոշ, հա՞: Այսինքն՝ յուրաքանչյուր տեղ ես ունեմ մի հատ քաշած խողովակ, ուր գնում է իմ ինֆորմացիան, նույն տեքստն ունի, հա՞: Ու իմ ունիվերսալ արժեքային համակարգը, ու իմ հոմոգենացման ձգտումը, ու իմ նորմերը և կառույցները, ամեն ինչը... ու էսենց ուղարկում ա:

Իմ սիրած երկրորդ օրինակը բերեմ. Չինաստան՝ էլի հզորագույն ցանց-պետություն, բայց բոլորովին այլ տիպի: Էլի կենտրոն, էլի տեքստ, բայց ներկայությունը բացի այն ձևերից, որոնք կան, ասենք, պետության զինանոցում՝ դեսպանատուն, ռազմական խարիսխ, և այլն, և այլն, մշակութային ինչ-որ կենտրոններ, բացի դրանից նաև Չայնա Թաուններ, հա՞: Աշխարհում ինչքան մեծ քաղաք կա, լուրջ քաղաք կա, այդ բոլոր քաղաքներում մենք կարող ենք գտնել Չայնա Թաուններ՝ Մանհեթնի կենտրոնում... Չայնա Թաունը Չինաստանն ա, որոնք չինարեն են խոսում, չինական երաժշտություն, և այլն, և այլն, հա՞: Եվ դա ինձ թվում է բոլորդ անցել եք՝ հաղորդակցվող ֆիզիկա է: Հաղորդակցվող անոթների համակարգը գիտե՞ք որն է, չէ՞՞՞ այստեղից ջուրը լցնում ես, այնտեղից՝ մակարդակների հավասարեցում է լինում: Ուրեմն՝ ինֆորմացիան Չայնա Թաունում լցնում ես, ինքնալցվում է, Չինաստանն է այդ ինֆորմացիան... Եվ եթե կարիքը կա՝ Չինաստանը նաև մյուս տեղն է տալիս: Դա աշխատացնում է իրա ցանցը:

Դրանք մի քիչ տարբեր ձևերով են ստեղծվում: Չինական ցանցը ստեղծվել է բնական ձևով, այսինքն՝ մարդիկ արտագաղթել են, հսկայական բիոմասսա ունեն, հա՞ մարդկային, հզոր զանգված ունեն ու աշխարհով մեկ մեկնում ա, մինչև մեկ ու ուր միլիարդ: Լուրջ մասսա է, որ դու կարող ես դրա հիման վրա ինչ-որ բաներ անել, բայց դա բնականում է տեղի ունենում, որովհետև այն, ինչ հիմա, ինչի մասին խոսում էի, փոքր ա, դուրսն են մնում, գնում են՝ տարբեր տեղեր են բնակվում և տարբեր տեղերում բնակվելով (շատ կարևոր բան)՝ չեն կորցնում իրենց ինքնությունը, իրենց տիպը, իրենց պատկանելությունը:

Ամերիկյան մի քիչ ուրիշ է, հա՞: Ասենք՝ ամերիկյան ներկայությունը նաև «փրկության բանալին» է, չէ՞: Այն մարդիկ են, որոնք գնում են եսիմ հեռավոր, ամենավտանգավոր տեղերն անգլերեն սովորեցնելու, բուժելու մարդկանց, օգնություն ցույց տալու, և այլն, և այլն: Կամ Սի Էն Էն-ը, չէ՞, որտեղ միացնում եք՝ Սի Էն Էն կա, հա՞: Բայց սա այլևս բնական ներկայություն չի, չէ՞: Սա արդեն մղված, սարքված ներկայություն է: Կամ ենթագործիքները դրա՝ մի հատ այլ ցանց, որը ենթացանց է. մորմոնները, հա՞: Ամերիկյան է, ամերիկյան տեղի ունիվերսալ արժեքներ, բայց մորմոնյան հիմնավորմամբ: Սրանք ոնց որ ենթացանց են, որոնք ուրիշ գույնով պիտի նկարում նկարվեն, բայց որոնք կապված են այս հանգույցների հետ: Այս ցանցերի աշխատանքը որպես պետություն-ցանց, հա՞, կառավարվում է կենտրոնից: Իհարկե հանգույցներն իրենց հետադարձ կապն ունեն և իրենց ուղարկած ինֆորմացիան կամ SOS-ը, հա՞՝ «փրկեք մեզ», ազդում է կենտրոնի որոշումների վրա: Բայց այնուամենայնիվ կենտրոնը միակն է և բացարձակ նշանակություն ունեցողն է: Դա այս ցանցի ստեղծող կենտրոնն է:

Հիմա անցնենք մեկ այլ, բայց մեզ համար շատ ավելի կարևոր խնդրի: Ուրեմն՝ մեր առաջին համայնքները ստեղծվել են իհարկե շատ-շատ վաղուց՝ քրիստոնեությունից առաջ, բայց մենք հիմնականում կապում ենք քրիստոնեության հետ, և կապում ենք իհարկե տարբեր տիպի՝ երկու, հիմնականում սխալ տիպի գործունեության հետ: Առաջինը, բնականաբար, մեր համար ո՞րն է՝ առևտուր, չէ՞: Կարող ա հարևաններով, կամ չգիտեմ ինչով, ընկնում ենք դեռ ու դեն, ապրանք ենք առնում-վաճառում... Արաբական թերակղզում պեղումների ժամանակ Տիգրան Մեծի ոսկիներն ենք գտնում, բան, հա՞: Հասել ենք այնտեղ: Վերևն ենք գտնում, հա՞, Հյուսիսային, հա՞, Սկանդինավյան երկրներում:

36:00 – Սկանդինավյան երկրներում:

36:02 – Հա՞: Այսինքն՝ առաջին այդ տարածման եղանակն առևտուրն է, և երկրորդը՝ ինքնագոյացությունն է, ու դեպի Երուսաղեմ հիմնականում: Դա արդեն այս ամբողջ՝ վերևից դեպի Երուսաղեմ գնացող քարվանսարայներն են, քարավաններն են, տարբեր ուխտավայրերն են, որոնք ճանապարհին ստեղծվում են և ի վերջո Երուսաղեմում հայկական թաղամասը, որը գիտեք: Անին քանդվեց, (շարժման (գաղթի)) երկրորդ

մեծագույն ալիքը սկսվեց, հա՞: Գնաց: Գնաց Ուկրաինայով, կանգնեց Պոդոլսկ, Լվով, Լեհաստան, Հունգարիա, Բուլղարիա, հասավ Իտալիա: Նայեք, Ումբերտո Էկոյի ստեղծագործություններում Նվարդի անունը կա: Հայկական հերետիկոս-եպիսկոպոսները եկան, տարածեցին: Նաև ճարտարապետական հսկայական ազդեցություն ունեցավ. էդ մեր Գյումրիի տաճարի կառուցման վրա, և այլն, և այլն: Ու այստեղ համայնքներ են ստեղծվում: Այս համայնքները հիմա մեծամասնությամբ չկան, հետքերը բայց գոյություն ունեն: Կան ասենք հունգար-հայեր, հա՞, որոնք հայերեն չգիտեն, որոնք եկեղեցի՝ կաթոլիկ եկեղեցի են գնում՝ հունգարական, որոնք ոչինչ չունեն բացի մի բանից՝ հիշողությունից, որ իրենց երակներում հայի արյուն է, ու իրենք իրենց համարում են հայ, հա՞: Հունգարիայի քաղաքացի են, բայց հայ: Սա շատ կարևոր է:

- Մալազիայում էլ կան:

- Մալազիա, Սինգապուր և այլն: Ուր ասեք, կան: Իսլանդիա, Սկանդինավիա, հա՞: Եկեղեցի էլ ունեն: Հա՞, նու այդպես կառուցված չի, խաչը կա էջմիածնի, հա՞, բայց մի փոքր տեղ ունեն, որն անվանում են եկեղեցի, որտեղ հավաքվում են: Ակումբի պես բան է՝ նու ինչքան որ ինձ պատմել են: Այո: Շատ վստահելի աղբյուր չի: Համենայն դեպս: Այսինքն մենք ունենք այսպես, հա՞, երբեմն՝ խաչվող, երբեմն՝ չխաչվող... լրիվ հենց ես կենտրոնի հետ թույլ, ոչ միշտ պինդ կապված, բացի այն համայնքներից, որոնք ավանդական կապ ունեն: Ասենք՝ Սիրիայի համայնքի հետ, ասենք՝ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի: Մի համայնք էլ այստեղ, մենք մի բան էլ պիտի ասենք, այստեղ էլ կան ենթահամակարգեր. ասենք Դաշնակցությունն է. ենթահամակարգ է, չէ՞: Իսկ արժեքային համակարգով, իր, ուրեմն, շարքային կողով կամ, ի՞նչ ասեմ, բաներ կան, ասենք՝ կիլիկեցիների միություն, հա՞, արդեն այսպիսինն է հարցը: Արդեն (նախկին) բնակության վայրով, հա՞, քաղաքացիների մի ինչ-որ միություն է, որն առանձին ենթահամակարգ է, որը կարող է մտնի սրա մեջ, կարող է չմտնի, հա՞: Կամ Ընդհանուր Բարեգործականն է, կամ, չգիտեմ, հայ ոսկերիչների միությունը. հորիզոնական կառույցներ, ի տարբերություն դաշնակցության, հնչակյանների, որոնք ուղղահայաց կառույցներ են՝ հիերարխիկ են: Սրանք հորիզոնական են, հա՞: Ուրեմն՝ շատ կարևոր է, որ...

40:23 – Հորիզոնական կառույցն ի՞նչ է նշանակում, ես դա չեմ հասկանում:

40:27 – Օրինակ հիերարխիկ գիտե՞ս որն ա:

40:29 – Հիերարխիկը գիտեմ, բայց ի՞նչ կապ ունի: Գոյություն ունի A կլաս, A կլաս-ից ժառանգվում է B կլաս, ու այդպես հիերարխիա է:

40:47 – Ուզո՞ւմ ես լսես:

40:48 – Հա՞:

40:50 – Այսինքն՝ հիերարխիան. ես ավելի բարձր աստիճանի վրա եմ կանգնած, քան թե ինձնից ներքև կանգնածը, հա՞, ավելի ստորին աստիճանի վրա կանգնածը, նա ենթարկվում է ինձ, նրանից ներքև կանգնածը ենթարկվում է իրեն...

41:13 – Լավ, բարի:

41:15 – Հորիզոնականում այդպիսի հիերարխիա չկա, հասկանալի՞ է, թե՞ չէ: Այսինքն՝ հորիզոնականը և ուղղահայացը շատ հասկանալի են, հա՞: Այսինքն՝ Դաշնակցությունը հիերարխիկ է, չէ՞:

41:26 – Դաշնակցություն՞նր:

41:27 – Հա՛: Ցանկացած... Լա՛վ, դաշնակցություն բառը հանի: Ցանկացած կուսակցություն:

41:34 – Ցանկացած կուսակցություն հիերարխի՞կ է:

41:36 – Դե եթե կուսակցություն է՝ հիերարխիկ է, եթե կուսակցություն չի՝ ուրեմն միություն է, ընկերակցություն է, չգիտեմ՝ ինչ է: Եթե կա ղեկավար մարմին, եթե կան որոշումներ, որոնք պարտադիր են կուսակցության անդամների համար, ուրեմն հիերարխիկ է: Եթե չկա այդ ամեն ինչը, ուրեմն՝ հիերարխիկ չի:

41:54 – Յուրաքանչյուր պետություն հիերարխիկ է:

41:58 – Մենք պարզ բաների վրա ինձ մի շեղի, էլի՞ գնա, ինքդ մտածի: Մա այնքան հասարակ բաներ են, որ չեմ ուզում դրա վրա ժամանակ կորցնեմ, հա՞:

Լա՛վ, ուրեմն այն ցանցը, որն ունի միայն տեքստ, նա բացարձակ ազատ է, հա՞: Մուտքը միայն տեքստի վերջից է: Մտնում ես՝ եթե դուրը գալիս ես, դուրս ես գալիս՝ երբ որ այլևս քեզ չի վերաբերվում: Մա արդեն կարմիրով ենք ներկում, էս գնաց: Այստեղից անջատվեց այս ցանցը, այստեղ փակվեց: Բայց նաև կարող է՝ միանում է, չէ՞: Ու դա տեքստի գրավչությունից է կախված, հա՞: Հիմա մեր հիմնական պրոբլեմը՝ գոյության առջև կանգնած (լինելն է), որն այս տարիներին ցանցային, էպիգոդիկ գործող, հա՞, (դրսևորումներ ունեցավ). գործում է այն ժամանակ, երբ որ կա այսպես լուրջ ազդակ, ասենք՝ երկրաշարժ, հա՞: Երկրաշարժին մեկ էլ տեսանք, որ հսկայական քանակությամբ մարդիկ, ում արմատները ըսկի հայկական չեն, հողը, ինքն ըսկի հայերեն չի խոսում, հա՞, մեկ էլ եկան օգնելու: Կամ, հա՞: Մեկ էլ տեսնում ես՝ ինչ-որ մարդիկ, որոնք որ, ես ականատես եմ եղել, իռլանդական ազգանունով, հսկա, մի հատ շեկ մազերով, ոչ մի հայերեն բառ չգիտի, ոչ մի հայի նշույլ չկա, գալիս է, ասում է՝ «ես հայ եմ և ես այսինչ մարդն եմ, այսինչ բանով կարող եմ օգնել», հա՞: «Իմ արյան մեջ ես գիտակցում եմ ինձ որպես հայ, ուզում եմ օգնել», հա՞: Այսինքն՝ երբ որ կա ուժեղ ազդակ, հա՞, որը ցնցում է ինքնությունը, որն այդ հարցն է տալիս. «դու ո՞վ ես», հա՞: Ու դու ասում ես. «Հա՛, ես սրան պատկանում եմ, ես դրա պատասխանն ունեմ»:

Միանգամից քեզ կապում է այդ ցանցին:

Պրոբլեմն այն է, որ ուժեղ ազդակը շատ հազվադեպ է լինում, և ցանցը սկսում է դառնալ այս պունկտիրայիններից, հա՞, այս ընդհատվող գծերով, որը մշտական կոմունիկացիա չի ապահովում, հա՞, սրա:

Ուրեմն մեր հիմնական խնդիրը ո՞րն է: Եթե մենք ուզում ենք համապատասխանել դարաշրջանին, եթե մենք ուզում ենք պատասխանել հարցերին, եթե մենք ուզում ենք այնպիսի ուժեղ տատանումներ ունենանք, որ մեր ազդակները գնան հեռու, հա՞:

Եթե մենք կարողանանք ընդունել շատ ազդակներ, մարսել դրանք, հասկանալ դրանք, լինել ժամանակի հետ համընթաց, ապա մենք պիտի այս տեքստի վրա աշխատենք, հա՞: Եվ ոչ միայն տեքստի վրա աշխատենք, այլ նաև գիտակցենք այն հասցեները, որոնցով մենք պետք է այս տեքստն ուղարկենք: Այսինքն՝ գիտակցաբար պիտի վերակառուցենք այս ամբողջ ցանցը: **Այսինքն՝ ի տարբերություն Միացյալ Նահանգների կամ Չինաստանի, մենք պիտի լինենք ոչ թե պետություն-ցանց, այլ մենք պիտի լինենք ցանցապետություն:**

45:35 – Ես մի հատ հարց ունեմ:

45:36 – Հա՛, մի վայրկյան: Այ սա է: Հա՛, խնդրեմ:

45:55 – Ու դուք որ ասում եք. «Ստեղծել ցանց-պետություն»: Դրանով այսինքն և՛ տնտեսական խնդիր ենք լուծելու հետազայում, և՛ ինչ-որ հայկական, ես լավ չեմ հասկանում, ինչ-որ բոլոր խնդիրները Հայաստանի ու Հայաստանից դուրս ապրող հայերի... ինչ-որ խնդիրնե՞րն ենք լուծելու, թե՞ միավորելու, չեմ հասկանում:

46:14 – Ես խնդրում եմ. **եթե դու ունես ուժեղ համակարգ, եթե դու ունես մեծ մոբիլիզացիոն ռեսուրս, հա՞, եթե դու ունես անընդհատ ինֆորմացիոն փոխանակման հնարավորություն, ապա դու ի վիճակի ես բոլոր խնդիրները լուծել:**

46:36 – Այսինքն՝ անվտանգության:

46:38 – Բոլոր, բոլոր խնդիրները, եթե այդ ամեն ինչն աշխատում է, եթե քո... Այստեղ մի խնդիր էլ կա, որը բարդ խնդիր է: Դրա համար առանձնապես դրա վրա կանգ չառա: Հասկանալի է, որ ցանկացած հանգույցում տեղի է ունենում ինֆորմացիայի ստանալու և ուղարկելու գործողություն, որի ընթացքում դա փոխվում է:

- Հա, եզո-յի նշանակության մեջ էլ է այդպես:

47:10 – Այդ Շեննոնի համակարգն է, որտեղ տեղառուսների համընկնում եթե կա, ուրեմն հարյուր տոկոսանոց ընկալում կա, եթե չկա, ուրեմն՝ չկա, հա՞:

Բայց ես խնդիրը լուծվում է նույն Շեննոնի հենց տեսության մեջ. **հաճախակիությունն իմպուլսների բերում է նրան, որ տեղառուսների համընկնում են, հա՞:**

**Հիմա կարող եք տեսնել, թե արևելահայերենն ու արևմտահայերենն էս ընդամենը քսանչորս տարվա, քսանհինգ տարվա ընթացքում ինչքան են մոտեցել: Տեսնում ե՞ք:**

47:48 – Անգամ քերականական ձևերը:

-Իհարկե՛, որովհետև արագ գնում է, արագ իմպուլսները գնում-գալիս են, ու մոտենում են իրար: Նույնիսկ եթե, ասենք, բնական լեզուներ են: Իսկ, ասենք, արհեստական-սեմանտիկ, արհեստական չասենք՝ սեմանտիկ (իմաստային) համակարգերում դա ավելի հեշտ է դրվում:

48:10 – Պարոն Հովհաննիսյան, էս ցանցապետությունների մասին գաղափարը զիտե՞ք ինչ հիշեցրեց: Որ տարիներ առաջ կարդում էի Չարենցի «Երկիր Նաիրի»-ն, հենց այնտեղ էլ ինքն ասում է. «Ի՞նչ է Երկիր Նաիրի-ն՝ ուղեղային մորմոք, սարդոստայն, որ այսպես տարածված է բոլոր մարդկանց մեջ ու բոլորն ունեն իրենց պատկերացումներն էդ Հայաստան ասածի՝ Երկիր Նաիրի ասածի մասին». և ոնց որ ստացվում է հենց ցանցի մասնիկները մարդիկ են չե՞, ոնց որ հասկացա, որոնք իրար հետ ինֆորմացիայի միջոցով են կապվում: Եվ հենց այդ ցանցի մասնիկ դառնալու ամենակարևոր գործոնը հենց էդ մարդու ինքնությունն է, որի վրա պետք է աշխատել:

Հիմա այդ առումով ոնց որ դուք առաջարկում եք... դուք առաջարկում եք կոնկրետ հայ ազգի պարագայում, եթե քննարկենք էս ամեն ինչը, հայ ազգի տարբեր շերտերի, տարբեր ինքնության պատկանող մարդկանց, տարբեր... այսինքն, թեկուզ տարբեր կրոնական ինքնության պատկանող, տարբեր երկրներում ապրող, տարբեր լեզուների պատկանող մարդկանց կարողանանք միավորենք մի հաստ համակարգի մեջ, մի հաստ ցանցի մեջ, որը կարա կոչվի «Երկիր Նաիրի»:

49:20 – Չե՛, Չարենցը ուրիշ բան ա ավելացնում: Դու, իմ կարծիքով, դու շատ սխալ բաներ համեմատեցիր: Իմ կարծիքն եմ ասում:

49:25 – Հա, գուցե, գուցե: Ես ասեցի իմ կարծիքը՝ ինչո՞ւ եմ պատկերացնում այդպես:

49:30 – Ինչի՞ ա սխալ ասում:

49:31 – Որովհետև Չարենցը էն ա ասում, որ իրականում Երկիր Նաիրի էդ կոչվածը, որ էդ ուղեղում ա... մի՛՛ք ա...

49:36 – Իսկ ո՞վ է ասում, որ մի՛՛ք չի: Իսկ ո՞վ է ասում, որ ԱՄՆ-ն մի՛՛ք չի:

49:41 – Երեխեք, մի հաստ...

49:42 – Ընդամենը Չարենցն ուզում է փակի էդ էջը:

49:45 – Լա՛վ, լա՛վ, լա՛վ: Մի՛՛ք հասկացությունն ախր, մի՛՛քը հո սուտ չի: Մի՛՛քն իմ գործիքն է աշխարհը նկարագրելու:

49:55 – Միֆն իրական է:

49:56 – Եվ ես Հին Հունաստանում ապրող մի մարդ եմ, արևն ինձ համար Հելիոսն աս, որը ֆայտոն նստած, հա՞... Չարենցի մոտ... Կամ՝ հնդիկ եմ, մի երրորդ սերնդի աստվածների ժամանակաշրջանն աս: Իմ տղան, իրա մինչև արմունկները ոսկի աս, ձեռքերը բարձրացնում աս, արևը... հետո իջնում աս...

Միֆ է, միֆոլոգեմա է, որն իմ աշխարհընկալման, աշխարհաբացատրման միակ հնարավորությունն է: Այսօրվա մեր դիցաբանական համակարգն էր ավարտական դասարանի դպրոցականի պայուսակի մեջ իր հավաքած բոլոր դասագրքերն են:

Դիցաբանական տեքստը մորմոք է, ինքը միայն կրկնվող երևույթներն աս բացատրում, եզակի երևույթներն իրենից դուրս են:

Ինքը միայն էր նորմատիվ բաներն աս պատկերի մեջ մտցնում, հա՞: Այս է աշխարհը այս դեպքում: Ինքը չունի սկիզբ, չունի կենտրոն, չունի... Ոնց որ ֆիզիկայի դասագիրքը չունի սկիզբ, չունի վերջ, հա՞, չունի: Ֆիզիկա է: Որ կողմից էլ սկսես, ճիշտ ես, կգնաս, հա՞: Ոնց որ պատմության դասագիրքը չունի սկիզբ: Երբ որ մենք սկիզբ ենք դնում, մենք մեր համար ենք դնում: Ինքը իր համար չունի, հա՞:

Եվ դիցաբանական համակարգն ինքն արժեքների իրականացման աշխարհընկալման միակ ձևն է: Իսկ միֆերը կյանքում իրականացվում են ծեսերից, հա՞:

Ժողովրդավարությունն այ էր «ազատություն, հավասարություն, եղբայրություն» միֆոլոգեմայի իդեոլոգեման է:

Այսինքն՝ իդեոլոգեման ծեսի միջոցով է իրականանում:

«Ես գնում եմ քվեարկելու», հա՞:

Եթե միֆս կեղծ է, հա՞, այսինքն՝ ուրիշի աշխարհից բերված բացատրություն է իմ աշխարհի, ապա իդեոլոգեմաս լրիվ աուտ է, ծեսըս էլ խաբեություն է, չէ՞:

Հստակ ասեմ. եթե ես գնում եմ եկեղեցի՝ մոմ եմ վառում, բայց չեմ հավատում, սա ընդամենն այլ տիպի կապ է մյուս համակարգի հետ, բայց աստծո հետ կապված չի, բայց մոմ եմ վառել: Խաբում եմ հա՞, կեղծիք կա այստեղ, հա՞: Եվ այլն:

52:56 – Ասում եք, որ այդ ցանցապետության ստեղծման համար, օրինակ մեր երկրի համար, կարևոր կլինի տեքստը, չէ՞: Ամենակարևորը: Այդ տեքստը կարո՞ղ է ազգային գաղափարախոսությունը լինի:

53:04 – Չէ, չէ, չէ, ոչ մի դեպքում:

Ուրեմն՝ ազգային գաղափարախոսություն գոյություն չունի: Այդպիսի հասկացություն չի կարող լինել, հա՞:

**Տեսե՛ք, «գաղափարախոսությունը», իդեոլոգեման ինչի՞ հետ ես կապեցի. մի՛ֆի հետ ես կապեցի, չէ՞:**

**Մի՛ֆն աշխարհընկալում է: Աշխարհընկալումը դա ժամանակի ծնունդն է:**

Ինչ-որ մի արեալում՝ երկրագնդի վրա, դա մի քիչ ավելի ընդգծված, ավելի բարդ, ավելի տեխնոլոգիական տեսք ունի:

Մյուս արեալում՝ մի քիչ ավելի պարզ, մի քիչ ավելի էսպես փափուկ, հա՞, քիչ տեխնոլոգիաներով դրսևորում ունի:

Բայց բոլոր տեղերում նույնն է, հա՞, եթե իհարկե մենք չենք խոսում Ավստրալիայի աբորիգենների կամ ամազոնիայի հնդկացիների մասին, որոնք իզոլացված են, հա՞:

Դե որովհետև, երբ որ դու կոճակը սեղմում ես ու լույսը վառվում ա՛ դու պատկերացում ունես այն աշխարհի մասին, որտեղ կա էլեկտրականություն: Դու բոլորովին չգիտես, որ այս կոճակը սեղմեցիր, այնտեղ ինչ-որ միացում տեղի ունեցավ, որի հետևանքով այդ լարով էլեկտրոնների, հա՞, արդեն ինչ-որ շարժում է տեղի ունենում և... Դա քեզ պետք չի: Դա գիտություն է, հա՞:

Գիտությունն իհարկե դիցաբանական համակարգի հիմքում ընկած է, բայց գիտական մտածելակերպը, աշխարհընկալումը և դիցաբանականն իրարից շատ տարբեր են:

Իրենք միաժամանակ գոյություն ունեն, իրար չեն հակասում, բայց իրար վրա չեն նստում, չեն փակում մեկը մյուսին:

Նույն գիտնականը, որը շատ լավ գիտեր էլեկտրոնների շարժման մասին, ինքը բոլորովին պատկերացում չունի, թե դա ինչպես եղավ, որ կլոնների հնարավորություն է ստեղծվել, հա՞:

Իր համար էդ իր աշխարհի պատկերացման մեջ, աշխարհի պատկերի մեջ մի նոր դիցաբանական բան է, մի նոր միֆոլոգեմա է, որ մարդու ստեղծման, ծագման, զարգացման պրոբլեմի հետ է արդեն կապված. աշխարհս փոխվեց: Նու, չգիտեմ՝ ինչ: Կովին մորթում ես, ջիգյարը վերցնում ես, դնում ես, հա՞... Լավ ա՞ կլոնը: Կլոնը, երբ որ արդեն մարդ ա, արդեն ոնց որ...

**Տեսե՛ք, աշխարհը փոխվում է՝ սկսում ես ուրիշ պատվիրանների մասին մտածել: Միջուկային զենքը ստեղծվեց, պատվիրանների թիվը մի հատով ավելացավ՝ «մի՛ տարածիր», չէ՞, ու միանգամից խախտողներ եղան:** Ոնց որ «մի սպանիր»-ը շատ սիրում են խախտել, չէ՞, հատկապես քաղցր է «մի գողացիր»-ը, հա՞, խախտելը, էն մյուսները չեն ասի: Հա, դու...

56:33 – Ես գիտե՞ք ինչ էի մտածում: Մի քիչ ավելի պրակտիկ: Երբ որ ասում էիք ցանցապետության ձեր տեսլականը Հայաստանի պարագայում՝ կենտրոնները մեր, երբ



որ ուժեղացնում են տեքստը, այսինքն՝ դուք ձեր տեսլականով նաև ենթադրում եք համայնքների մասնակցությունը կենտրոնի ձևավորմանը ու չե՞ք վախենում:

56:55 – Ես հենց խոսքը տանում եմ նրան, որ **կենտրոն չպիտի լինի: Որ մի հաստ այլ տիպի տեքստային կենտրոն է ստեղծվում, որն ինքնակառավարման մեխանիզմներ ա ծնում իրենից, հա՞:**

Լավ, եկեք մի քիչ ուրիշ կողմից պատասխանենք: Ուրեմն մեր իրականության մեջ վերջին, նու, ասենք, երեսուն տարվա ընթացքում անընդհատ շատ լուրջ գիտնականներ քննարկում են պետության ձևափոխման խնդիրը: Ասում են՝ պետությունը այն ձևով, որը որ կա, այլևս չի կարող լինել: Ինչի՞: Որովհետև ստեղծվել է եսիմ ե՞րբ: Նու, իրականում պարզ է՝ երբ, ոնց է ստեղծվել. ասում ենք ազգ-պետություն: ... հենց որ սկսեց կաթոլիկ-կարդինալ լինելով կռվել գերմանացի բողոքական իշխանների կողմից կաթոլիկ Հաբսբուրգյան կայսրության դեմ, միանգամից խնդիրը սկսեց ձևակերպվել:

Իսկ երբ որ «հպատակ» հասկացությունը ոչնչացավ և տեղն եկավ «քաղաքացի» հասկացությունը, արդեն ֆրանսիական հեղափոխության ժամանակ ստեղծվեց այն, ինչը մենք անվանում ենք ազգ-պետություն, հա՞:

Եվ այս ազգ-պետությունը բնականաբար ուղղված էր նրան, որպեսզի, անտեսելով կրոնական գործոնը՝ ստեղծի մի սոցիալական, էսպես, միավորման հիմք, որը պետությանը պատկանելու վրա է, հա՞: Ես քաղաքացի՜ եմ: Կարևոր չի ես գուգենոթ եմ, թե կաթոլիկ եմ, կարևոր չի ես գասկոնեց եմ, թե չգիտեմ Նորմանդիայից եմ. ես քաղաքացի եմ, հա՞, ես Ֆրանսիայի քաղաքացի եմ:

Սա հասկանալի է՝ ինչ է – տեխնոլոգիաներ են, զարգանում են, կոլեկտիվները մեծանում են, քանի որ կոմունիկացիոն, տրանսպորտային կապերը թույլ են տալիս ավելի մեծ պրոյեկտներ իրականացնել:

Կոլեկտիվը մեծանում է, կոլեկտիվի մեծացման մոնոլիտությունը, միասնականությունն ապահովելու համար ուրիշ սկզբունք է պետք, հա՞: Ինձ այլևս էդ փոքր Գասկոյնը չի հետաքրքրում, ինձ պետք է Ֆրանսիան, հա՞: Դրա համար ուրիշ սկզբունք է պետք:

Հիմա, իսկ այսօր բոլորովին այլ իրավիճակ է: Պրոյեկտները մեծ են: [Նախորդ դասախոսությանը](#) ես ցույց էի տալիս հենց գլոբալ ենթակառուցվածքները՝ որպես պրոյեկտներ: Կոլեկտիվը մեծացել է. ու այնտեղ ոչ միայն տարբեր կրոնների, տարբեր էթնոսների, այլ նաև տարբեր քաղաքացիական պատկանելություն ունեցող մարդիկ են մտնում նույն պրոյեկտի մեջ:

Ուրեմն սրանց միավորման համար մի հաստ բոլորովին այլ սկզբունք է պետք գտնել:

Եվ այդ սկզբունքը ո՞րն է. Եվրամիությունն է սկզբունքը, չէ՞: Խաղաղօվկիանոսյան միությունը ոնց որ էլի լավ սկզբունք է, չգիտեմ՝ կաշխատի, թե չէ: Սունիականը վատ սկզբունք է, որովհետև անհետացման մեխանիզմները փակում է և հետ է զցում, հա՞:

Էթնիկականը, որը հիմնված է քաղաքացիության վրա, (այսինքն՝ դու Հայաստանի քաղաքացի ես՝ դու հայ ես), ինձ թվում է՝ էլի վատ սկզբունք է, հա՞, պրոբլեմատիկ սկզբունք է, որովհետև ստիպում է քեզ փակվել, իզուլացնում է քեզ, պատեր է սարքում շուրջդ: Պատեր սարքեցիր՝ կփվի եղ պատերը, հա՞: Դու էն հզորությունը չունես՝ միջուկային զենք չունես Հյուսիսային Կորեայի նման, որ պատռ պահես մի կերպ: Մեկ է փլվելու է, չէ՞: Ուրեմն ուրիշ էլք է պետք գտնել:

Ուրեմն պետությունը փլվում է երկու կողմից: Մեկ. բոլոր ենթակառուցվածքները վերևից՝ վեր-պետական կառույցների առումով վերցնում են քո պետական ինքնիշխանության որոշակի մասը: Մենք Եվրասիական Միությանն արդեն զիջել ենք, հա՞: Եթե մտնեինք ասոցացման համաձայնագրի մեջ՝ պիտի Եվրամիությանը զիջեինք, հա՞, որոշակի ֆունկցիաներ:

Բոլոր եվրոպական պետությունները զիջել են Եվրամիությանն իրենց սուվերենության զգալի մասը:

Բայց մյուս կողմից՝ ներքևից էլ ես կորցնում, որովհետև եղ անտերներն անցնում են հողի վրայով՝ եղ խողովակներն է, եղ լարերն է, եղ մալուխներն է: Ուրեմն՝ տեղական ինքնակառավարման մարմինները շատ ավելի կարևոր են, շատ ավելի լուրջ դեր են ձեռք բերում, քան թե էս կենտրոնում նստած մարդիկ: Ֆունկցիաները, մարդ չասենք, հա՞: Եղ ֆունկցիաները պիտի գնան ներքև, հա՞:

Այստեղ ի՞նչ է մնում: Այստեղ մնում է շատ կարևոր մի բան. **պետությունը բնորոշվում է որպես մի մարմին, որը բացարձակ մենաշնորհ ունի բռնություն իրականացնելու, հա՞:**

01:02:30 – Այդտեղ բռնության...

01:02:31 – Հասարակության... Հասարակության անվտանգությունը՝ ներքին և արտաքին, ապահովելու համար: Ասենք. բանակ ես պահում՝ արտաքին է, ոստիկանություն, դատախազություն՝ ներքին է, հա՞: Բայց դրա համար դու նաև իրավունք ես ստանում մաքսեր հավաքելու, տեքստեր հավաքելու և այլն, և այլն:

Հիմա էս ամեն ինչը հավաքելու համար դու լրացուցիչ ֆունկցիաներ ես քեզ համար վերցնում, որոնք քեզ պետք չեն, հա՞, կամա՛ց-կամաց: Օրինակ՝ գաղտնալսումը և այլն, հա՞, հազար հատ օրինակ կարելի է բերել: Սա **պետության պատասխանն է ցանցերի ներգործությանը: Ցանցերը հիմա գրոհում են պետությունները: Եվ պետությունը, որն այնքան հզորություն չունի, որ իր ցանցը ստեղծի, այսինքն՝ Միացյալ Նահանգները, ինքը փորձում է փակվի: Փակվելով՝ սկսում է կորցնել, որովհետև ցանցը անցողիկ է: Ինչի՞**

**որովհետև ինֆորմացիա է հա՞, չես կարող փակել: Ինտերնետը կանջատես, բայց պրոկսիներով դուրս կգա ինքը:**

Իրանում կամ Սիրիայում, որտեղ ես երկար աշխատել եմ, մեկ նայում ես՝ բոլոր տանիքների վրա էդ արբանյակները, արբանյակային անտենաները ցցած են՝ սնկերի պես: Մեկ էլ մի առավոտ զարթնում ես, տեսնում ես՝ հավաքած է, հա՞: Կռանն է եկել, ավտորիտար երկիր է. «Հավաքե՛ք, ինֆորմացիան փակո՛ւմ ենք», բան: Երկու շաբաթ հետո կամա՛ց, սնկի նման՝ էլի անձրևը եկել ա, սկսել են դուրս գալ:

Պարզ է, ու սա նոր հնարավորություններ էին. էս անտենան դուրը չի գալիս, ասում է՝ առ քեզ, գնա, հա՞: Այսինքն՝ մարդիկ այս դեպքում, **կաշառքը կոռպերացնում է, չէ՞, ավտորիտար հասարակություններում, որտեղ բնությունը կարևոր դեր է կատարում, կաշառքն ազատությունն ընդլայնելու կարևոր միջոց է:**

Ուրեմն այս պայմաններում, երբ որ դու հնարավորություն չունես մեծ, լուրջ ու այսպես՝ մոնոլիտ, երկար կայունություն ունեցող, ապահովող պատ կառուցելու՝ դու պիտի դառնաս ցանց: Դու պիտի... **քո ընդունիչներն այնքան լավ պիտի աշխատեն, հա՞, որ դու կարողանաս բոլոր տեղերից եկող ազդակները ստանաս, մարսես, վերածես քո սեփական ազդակի:**

**Եվ աքսիոմա է, որ բազմախողովակ համակարգերը շատ ավելի կարևոր են ու երկարատև են, քան թե ուրեմն նվազ հնարավորություններ ունեցող համակարգերը, ինչը նշանակում է, որ մենք անշուշտ այդ հնարավորությունն ունենք, հա՞:**

Մի հատ նայեք. Երևանում ի՛նչ ազգի ռեստորան ասեք՝ կա, հա՞: Սիրիացիք եկել են՝ սիրիական են սարքել, սիրիահայերինը չի, հա՞, բեյրութահայերը եկել են՝ լիբանանյան խոհանոց են սարքել, ֆրանսիահայերը եկել են՝ ֆրանսիական խոհանոց են սարքել, իտալական, ճապոնական, եսիմ, հա՞: Չինացիք են մենակ եկել՝ իրանց չինականը բերել, հա՞: Բայց դա էլ արդեն չինական լրիվ համակարգի գործունեությունն է, աշխատանքն է:

01:06:15 – Այսինքն՝ կարող ենք ասել՝ ցանցային պետություն ասած գաղափարը՝ քսանմեկերորդ դարում ծնվող համակարգը, գոյություն է ունեցել մինչև հիմա՞:

01:06:23 – Ցանցային պետությունն իհարկե նոր ծնվող բան է, արդեն ծնված կարելի է ասել, ցանցապետությունն ընդհանրապես, ոչ ոք ընդհանրապես չի ունեցել ցանցապետություն, իսկ ցանցերը՝ ինչ մարդ ծնվել է ու հասկացել է, որ կողքը տարբեր ուրիշ մարդիկ էլ կան... սկզբից կարծել է, որ իրենք մարդ չեն՝ անասուն են, հա՞, ու մարդու լեզվով չեն խոսում: Ասենք գերմանացուն համարել է, որ ինքը նեմեց է, նեմոյ է՝ լավ է, անասուն է:

01:07:00 – Դրան կլիան են, չէ՞, ասում:

01:07:02 - Հա՛, հա՛, հա՛: Իսկ հետո հասկացել է՝ չէ, էն էլ ա մարդ՝ բարբարոս չի հա՞, սկսել ա հասկանալ, որ արդեն իր հնարավորությունները զարգացնելու համար պիտի կոմունիկացիայի մեջ մտնի: Այդպես ստեղծում են ցանցեր, ստեղծում են գաղտնի ցանցեր, հա՞, հնագույն ասորական ցանցերը և այլն: Ինչ ասեք, հա՞:

01:07:32 – Կարծո՞ւմ եք արդյոք, որ հրեական ցանցապետությունը կարող է օրինակ հանդիսանալ մեր համար, որի ստարտային կետերը, իմ կարծիքով՝ նույնն են:

01:07:43 – Չէ՛, չեմ կարծում, մի պարզ պատճառով: Հրեական ցանցապետությունը ցանցապետություն չի, Իսրայելն արհեստական կառույց է, ինքը բնական պետություն չի: Հրեաները երկու հազար տարուց ավել է կառուցում են իրենց սփյուռքը, ու ինքը հենց որպես սփյուռք էլ կայացել է, ու այդպես էլ շարունակում է, իսկ **մենք այն պահից, երբ որ կա Հայաստանի անկախ հանրապետությունը՝ այլևս սփյուռք չունենք**: Մենք ունենք... Մենք սփռված ենք, մենք հայրենիք ունենք հա՞՞ վերականգնած հայրենիք ունենք, ուստի **մենք ունենք համայնքներ, որոնք ապրում են Հայաստանից դուրս**, հա՞: Սկզբունքային տարբերություններ են, հետո՝ իրենց ձեռնտու է (ցանցապետություն չունենալ): Հսկայական խմբեր կան հրեաների, որոնք դեմ են Իսրայելի գոյությանը: Նու նախ էն հրեաները, որոնք ասում են որ Հռոմում Իսրայել... Երուսաղեմ չպիտի լինի, քանզի նա երկնային է: Երկրորդն այն հրեաները, ասենք՝ Նյու Յորքի հրեական հսկայական այդ ազդեցիկ խումբը, որոնք հստակորեն համոզված են, որ չպիտի այնպիսի տեղ տաս, որը խփվի: Իսրայելը խփվում է, դա թույլ կետ է, ու իրենից ռեսուրս է իլում: Այն պայմաններում, երբ որ ես էդ ռեսուրսը կարող եմ օգտագործել իմ ցանցը մեծացնելու, ուժեղացնելու համար, հա՞, Իսրայելը դառնում է մի գլխացավանք իմ համար, և ես ստիպված եմ անընդհատ վառարանի (համար նյութ) տամ ու ափսոս է դա: Երրորդ խումբը կա, քրիստոնյա հրեաները, որոնք համոզված են, որ հիմքում Իսրայելի ընկած է աստված... աստվածընտիր ժողովրդի գաղափարը, ինչը կործանման է տանում, հրեական գաղափարը այդպիսին այլևս չի կարող լինել: Այսինքն՝ Իսրայելին դեմ շատ բաներ կան, Հայաստանին դեմ՝ ես չգիտեմ: Բայց մի բան էլ ասեմ... Կներե՛ս, հեսա կասես, լա՞վ:

Ուրեմն՝ այս ցանցը ինքը, ասեցի, ինքը միայն տեքստով է, ինքը ազատ է: Այսինքն՝ էթնոֆաշիզմ, ֆաշիզմ չի ինքը, հա՞: Եվ այս ազատությունը մենք հիմա էլ ենք տեսնում: **Հայաստանում գտնվող այսօր տասնյոթ հազար, հա՞, ասենք, փախստականների թվում բազմաթիվ քրդեր կան, արաբներ կան, որոնք ա՛յս տեքստով են եկել: Ո՛չ թե փախել են, իրանք փախնելու շատ տեղ ունեն, հա՞, բայց իրանք այս տեքստով են եկել: Հայի անունը գրավիչ է այդ մարդկանց համար հա՞: Ու տեքստի հիմնական որակը դա՛ պիտի լինի՝ պիտի հայի անունը գրավիչ լինի, պիտի հպարտանա մարդ, որ ասի «ես հայ եմ», ոչ թե «հայ չեմ»:**

01:10:56 – Մի բան հարցնեմ. կարող ա սխալ ա, բայց դա Իսլամական Պետություն էլ կարելի է համարե՞լ:

01:11:00 – Չէ, չէ: Իրանց մոտ էլ այդ կոհիվը կա: Ուրեմն հենց ամենամեծ պրոբլեմն այն է, որ սրանք որոշեցին խալիֆայությունը հողի վրա ստեղծել, հա՞: Իսկ նույն մուսուլման եղբայրներն իրենց զարգացման պատմության ընթացքում հասել են նրան, որ շատ զործուն և ակտիվ ցանց ունեն, հա՞, տեքստով է, կենտրոն չունեն, դրա համար չես խփի հա՞:

01:11:31 – Հա, հասկանալի է:

01:11:32 - Իսկ սա արդեն, հողը եղավ՝ կիսփես: Հըր դուք ձեզ ամերիկացիների տեղը դրեք: Այն ամեն ինչը, ինչ որ տեղի է ունենում այնտեղ, հրաշալի է, չէ՞, որովհետև կա մի հատ մագնիս՝ Իսլամական Պետություն, որն ինչքան աննորմալ, վտանգավոր տարր կա՝ քաշում է իրեն, հա՞, փոշեկուլի պես քաշում է, սրանք գնում են այնտեղ, ոչնչանում են, հա՞ թիրախ են դառնում: Մյուս կողմից՝ ռուսները մտան, հա դե մտան, թող խփեն իրար, թող սպանեն իրար, հա՞, բայց մինչև որոշակի մակարդակ: Դրա համար ես բաներ կասեմ: Բառեր կասեմ: Որ «էս ի՞նչ եք անում», և այլն, և այլն:

01:12:15 – Այսինքն, որ չուզեին, տարածք չունենային՝ ավելի վտանգավոր կլինեին իրանք: Հա, հասկացա:

01:12:19 -Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, որովհետև այդ sleeping cells հասկացությունն է, չէ՞ «քնած բջիջներ»: Այդ քնած բջիջները կան ամեն տեղ: Հիմա սրանք էլ են սկսել ոնց որ, կոչեր են ուղղում քնած բջիջներին, որ «արթնացեք, որ մեր բեռը թեթևանա մի քիչ»: Այնտեղ պայթացրեք, այնտեղ պայթացրեք, ապստամբություն բարձրացրեք, այս արեք, այն արեք, հա՞, «որ մեր բեռը թեթևանա»: Ինչ-որ տեղեր տեղի է ունենալու այդ ամեն ինչը՝ Հյուսիսային Կովկասը ձեզ օրինակ, Ուզբեկստանը ձեզ օրինակ, հա՞, ինչ-որ տեղեր էլ լավ արդեն վերահսկվում է:

01:13:01 – Մի բան էլ էլի հարցնեմ: Օրինակ՝ աշխարհի տարբեր երկրներում հայեր կան, ասենք՝ Վրաստանում էլ, բան, բայց ինչ-որ մի տեղ զգում ես, որ Վրաստանն էլ է ուզում քիչ հայ: Այսինքն կարելի՞ է ասել՝ իրանք ուզում են կանխեն Հայաստանի ցանցային պետության կայացումը:

01:13:15 – Իրենք ուզում են կանխել մեր լուրջ ազդեցությունը Վրաստանում, ինչն իրանց համար պատմական հիշողության մաս է, որ շենքին ցույց ես տալիս սիրուն, հայի անվան տակ ա, չէ՞, էդ շենքը և իրենք, նու, այսպես՝ մեղմ ասած, մեզ... մեզնից զգուշանում են, հա՞, և այդ զգուշանալն արտահայտվում է տարբեր ձևերով, հա՞, ասիմիլացիայով, ու այդ ասիմիլյացիայից հետո գալիս է մի երրորդ վախը, որ «քո մեջ հայի արյուն կա», դու իրանց հետ կապված ես: Դա էլ արդեն մեր սենց գիտակցական ցանցի՝ իրան կապում են, որ «մենք կանք արդեն ցանցում»: «Մենք հըր չկանք, բայց, բայց իրենք արդեն...»

01:14:12 – Հա:

01:14:16 – Ձեր թվարկած տարբերություններին՝ Իսրայելի հատկապես: Իսրայելը ավելի շատ ուժեղ քաղաքացիական ինքնություն ունի, քան թե Իսրայել պետությունը: Այնտեղ քաղաքացիների զգալի մասն այնպես ծարավ են Իսրայելի քաղաքացիների:

01:14:33 – Հա, անշուշտ:

- Այսինքն՝ այնտեղ իսրայելացի ու հրեա հասկացության մեջ շատ ուժեղ խզում կա:

01:14:40 – Դե հենց դա է, որ Իսրայելի այս վիճակը գալիս է այն իրողությունից, որ Իսրայելի քաղաքացին չի հանդիսանում այնպիսի փաստարկ կամ հիմք, որ կրոնաէթնիկական գործոնն անտեսվի: Քաղաքացին ավելի ցածր է, քան թե կրոնաէթնիկական պատկանելությունը:

- Իսրայելի՞:

- Հա:

- Այդպե՞ս եք կարծում:

01:15:11 - Դե ես ծանոթ եմ շատ պաղեստինցիների հետ, որոնք համագործակցում են Իսրայել պետության հետ, հա՞: Ասենք՝ պառլամենտի անդամ են, էս են, էն են: Դա շատ... այդ պաղեստինցիները ձեր կարծիքով Իսրայելի պաղեստինցիների ո՞ր տոկոսն են կազմում: Իհարկե ոչ ոք չի կարող հստակ թիվ տալ. մեր գնահատականներով՝ տաս տոկոսից բարձր:

- Տաս տոկոսը քիչ չի:

- Չէ, ոչ թե Իսրայելի ամբողջ բնակչության, այլ մենակ արաբ-պաղեստինցիների:

- Հա:

01:15:50 – Այսինքն՝ իննսուն տոկոսը լրիվ հակադիր տրամադրություններ են: Դրանք բոլորը քաղաքացի են: Դրանք բոլորն էլ քաղաքացի են: Նրանք ուզում են, որ Երուսաղեմը դառնա Պաղեստինի մայրաքաղաք: Ինչը հակասում է ամբողջովին Իսրայելի և՛ իդեոլոգիային, և՛ քաղաքականությանը: Դրանք բոլորն ուզում են, որպեսզի Պաղեստինը լինի անկախ պետություն, հա՞: Դրանք... և այլն, և այլն: Դրանց մեջ կոիվ կա, իհարկե, այդ երկու հատվածը կա, մեկը կրոնական-սունիական, մյուսը՝ պաղեստինյան էթնիկական բաղադրիչ է շատ ուժեղ: Այս իրենց ներքին կոիվն իրանց թուլացնում ա, բայց չի մոտեցնում իսրայելացիներին՝ հրեաներին չի մոտեցնում:

01:16:42 - Թեման շարունակելով՝ մի հատ հարց ունեմ: Էս ցանցային, ո՞նց էր կոչվում, ցանցապետությո՞ւն՝ ցանցապետության հետ կապված: Էս ինչ-որ տեղ չի՞ հակասում (ո՞նց ասեմ, որ ճիշտ լինի) քաղաքացիական գիտության վրա հենված ազգային պետության, նու, ասենք, վեստֆալյան տիպի պետության...

- Հակասում է, իհարկե:

- Իսկ առանց այդ վեստֆալյան փուլն անցնելու հնարավոր է ընդունել ձեր ասածը: Բայց մենք չենք անցել, չէ՞, հըլը դա:

- Չենք անցել, ու չի էլ սպասվում, ոնց որ, առանձնապես անցնել, որովհետև այս տենդենցներն ավելի ուժեղ են:

- Հա:

01:17:22 – Հա՞: Ու մենք, այն բոլոր ավիքները, որ գալիս են մեր վրա, իրանք հենց բերում են այս մտայնությունը, ոչ թե այն: Բայց կովի մեջ ենք, մենք պետությունը պիտի ուժեղացնենք, էս ամեն ինչը, հա՞, լրիվ ուրիշ միտում է, չէ՞:

- Եկող հոսանքը:

- Հա, բա ոնց: Ես ասում էի՝ կիսաքառտիկ աշխարհում ենք ապրում: Միտումներն իրար անընդհատ հակասում են, հա՞: Նոր ձևավորվող աշխարհ է, իսկի չգիտենք՝ ի՞նչ աշխարհ է, հա՞: Ես միշտ, որ ասում եմ «փիլիսոփայությունը մեռել է», իմ հետ կռիվ են անում: Հա, բայց փիլիսոփայությունը մեռել է: Ինչի՞ է մեռել: Որովհետև գրավոր ինֆորմացիան մեռավ: Փիլիսոփայությունը ծնվել է գրավոր ինֆորմացիայի ու մեռնում է գրավոր ինֆորմացիայի հետ: Այսինքն՝ հիմա ուրիշ բանում ա, ուրիշ սիստեմ է աշխարհի պատկեր կազմելու:

Ու աշխարհի պատկեր կազմելու առաջին... առաջին քայլը գիտե՞ս որն ա: Այն է, որ քարտեզ ունենաս՝ այ այդ գիտելիքի որոնման քարտեզն ունենաս: Դրանով էս դու այսօր աշխարհը ձևավորում, և ինքը շատ արդեն բազմամակարդակ է: Ինքը շատ հեշտ է փոխվում, հա՞, աշխարհընկալումը: Մի հատ կրիա է, վրան մի հատ այսպես սկավառակ է, դա է, հա՞: Հետո էս կրիան չի բավարարում արդեն, այնտեղ շարժում է պետք, փղեր են ավելացնում:

01:19:02 – Ուզում եմ ասեմ՝ փիլիսոփայական է՝ աշխարհի ճանաչողությունը փոխարինվել է միֆոլոգիական աշխարհաճանաչողության հետ:

01:19:08 – Չգիտեմ ինչու, չէ, չէ, այդ երկուսը երբեք իրար չեն բացառել՝ միշտ իրար կողք են եղել: Նայի, ուրեմն հենց որ ստեղծվում է գրավոր ինֆորմացիայի համակարգը, մինչ այդ բանավոր էր, չէ՞, բանավոր ասում էիր՝ փոքր էր՝ լրիվ հերիք էր, խորությունն էլ հիշողության լրիվ բավարարում էր, հա՞՞ երեք սերնդի հիշողություն, բանավոր հիշում էիր՝ լրիվ հերիք էր: Ու այդտեղ չկար գիտելիք, չկար գիտություն, կա իմաստություն, հա՞: Բիձեն գիտեր, թե իրա պապի ժամանակ էս խնդիրը ոնց են լուծել, էս առուն ոնց ա հոսել, էս սահմանն արոտների միջև ոնց ա եղել, հա՞: Ուրեմն՝ նույն ձևով պիտի անցկացնի: Դա իմաստություն ձևակերպումն էր, հա՞: Սա ոչ խելք է, ոչ էլ գիտելիք է:

Հենց որ գրավորը ստեղծվում է, կոլեկտիվը մեծանում է, քանակը շատանում է՝ գիտելիքը դառնում է գիտություններ՝ ճյուղավորում է սկսում, հա՞: Փիլիսոփայությունը սկսում է

հավաքել այս գիտությունների ոնց որ ծաղկաքաղը, որ այդ աշխարհի պատկերը ստեղծի, որ մարդն իրան տեղադրի այդտեղ, իմանա՝ որտեղ ա ինքը:

Հիմա էս ամեն ինչը նորից փոխվում է, որովհետև դու դրանով ոչինչ չես բացատրում, հա՞, որովհետև շատ բարդ ա աշխարհը:

01:20:31 – Թե՞ փիլիսոփայությունը դառնում է գիտությունների սնուցող աղբյուրը:

01:20:36 – Դե ոնց ուզես: Սա արդեն մոտեցման խնդիր է: «Հա իհարկե, էս էնգելս կարդալու եմ: Հա, իհարկե, էս Արիստոտել կարդալու եմ, հա՞, որովհետև դա մի գանձարան է, բայց նաև էս Սոկրատ եմ կարդալու, որը գրավոր չի», հա՞: Այսինքն՝ Սոկրատը հաղորդվել է ո՞ւմ միջոցով՝ Պլատոնի միջոցով, չէ՞, բայց ինքը բանավոր է եղել. «էս բացատրում եմ, ոչ թե ուզում եմ, որ ինձ հետ համաձայնես»: Այսինքն՝ ինքը բանավորը վերցրել է, մշակում է, մտցնում է, որովհետև հիմա էս նույն Պլատոնին, որը գրավել է, պիտի վերցնեմ, սեգմենտների բաժանեմ, որովհետև մեծ ինֆորմացիա ինտերնետով պետք չի, հա՞, ու այդպես քվանտային ուղարկեմ: Այսինքն՝ պիտի ադապտացնեմ այ էդ հսկայական գանձն այսօրվա իմ ինֆորմացիոն հսկայական հնարավորություններին, որ էս կարողանամ խաղացնեմ էս ամեն ինչը: